



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնք Ա. Խանջյան,20

Հեռ. /234/ 62646

yeghegnavan.ararat@mta.gov.am

Էլ. փոստ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հանրային լուսմների մասին
18 հունվարի 2019 թ.

Ս/թ հունվարի 19-ին Եղեգնավան համայնքում անցկացվել է հանրային լուսմներ: Հանրային լուսմներին ներկա էին ավագանու անդամները, համայնքապետարանի, մշակույթի տան, <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցները, համայնքի շուրջ 20 բնակիչներ և մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Լ. Գրիգորյանը:

Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Հովսեփ Ղազարյանը, ներկայացնելով 2018 թ-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքները բյուջեի կատարման ուղղությամբ, նշվեց, որ դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքի բյուջեն կազմել է 61598,086 հազար դրամ, որից

- հողի հարկի գծով **9460,848** հազար դրամ կամ 103,3 %,
- գույքահարկի` **2360,4** հազար դրամ կամ 118 %,
- տեղական տուրքի` **232,4** հազար դրամ կամ 101,93 %,
- վարձավճարի` **3841,518** հազար դրամ կամ 128.%,
- աղբահանության վճար` 1474,17 հազար դրամ կամ 105 %,
- խմելու ջուր` **4200,65** հազար դրամ կամ 100 %,
- վարչական գանձումներ` 1099,4 հազար դրամ,
- պետությունից դոտացիան կազմել է` 31465,0 հազար դրամ
- օտարումից մուտքեր` 2426,2 հազար դրամ,
- տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է` 4810,8 հազար դրամ:

2018 թ. Բյուջեից կատարվել են հետևյալ ծախսերը`

Տարվա պլանը կազմում է **59753.400** դրամ, փաստացի ծախսը **52851.059** դրամ 88.45%, որից`

1. Կառավարման մարմնի պահպանում`

- Աշխատողների աշխատավարձեր` 4111 հոդված -18942626.10 հազ. դրամ,
- Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ` 4112 հոդված- 1186.0 հազ.դրամ,
- Բանկային ծառայություն` 4211 հոդված- 8.0 հազ.դրամ,
- Էներգետիկ ծառայություններ` 4212 հոդված- 696.675 հազ.դրամ,/ գազամատակարարում- 105.819 հազ.դրամ և էլ. Էներգիայի վճար 590.856 հազ.դրամ
- Կապի ծառայություններ` 4214 հոդված-233.239 հազ.դրամ,/ինտերնետ ծառայության վճար/
- Ապահովագրական ծախսեր` 4215 հոդված- 29.0 հազ.դրամ/ մեքենայի պարտադիր ապահովագրություն/

Տեղեկատվական ծառայություններ՝ 4234 հոդված- 49.0 հազ.դրամ /Արարատ թերթի բաժանորդագրության վճար /
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 4239 հոդված- 428.0 հազ.դրամ, /ՀԾ-7 հաշվապահական ծրագրի ձեռք բերման և դասընթացների գումար- 298.0 հազ.դրամ և գույքի գնահատման արժեք- 130.0 հազ.դրամ/
Մասնագիտական ծառայություններ՝ 4241 հոդված- 57.775. հազ.դրամ, / էլեկտրոնային ստորագրության վճար- 3.0 դրամ, գազասպառման համակարգի վճար -27.550 հազ.դրամ, դոմեն- ծրագրային ապահովման սպասարկման վճար 12.0 հազ.դրամ,
Շենքերի ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4251 հոդված- 148.4 հազ.դրամ,
Սարքավորումների եվ մեքենաների ընթացիկ նորոգում՝ 4252 հոդված- 248.5 հազ.դրամ/ համակարգչային սարքավորումների նորոգում -78.0 հազ.դրամ և մեքենայի ընթացիկ նորոգում- 170.5 հազ.դրամ/
Գրասենյակային նյութեր՝ 4261 հոդված- 101.490 հազ.դրամ,
Տրանսպորտային նյութեր՝ 4264 հոդված- 746.1 հազ.դրամ, / բենզինի ձեռք բերում/
Պարտադիր վճարներ՝ 4823 հոդված- 55.7 հազ.դրամ, / բնապահպանական վճարներ թափոնների տեղադրման և սպառման համար 33.7 և 2 մեքենայի տեխ.զգնում 22.0 հազ.դրամ/
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված- 165.0 հազ.դրամ /գնվել է պատճենահանման բազմաֆունկցիոնալ մեքենա/,

2.Հանգիստ, մշակույթ, կրոն

Աշխատողների աշխատավարձեր՝ 4111 հոդված- 5822.304 հազ.դրամ,
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն՝ 4239 հոդված- 65.0 հազ.դրամ /համայնքային միջոցառումների երաժշտական ձևավորման գումար- Տրնդեզ և 1-ին հանրապետության 100-ամյակին նվիրված միջոցառման/
Ընթացիկ նորոգում՝ 4251 հոդված- 47.5 հազ.դրամ,
Հատուկ նպատակային նյութեր՝ 4269 հոդված- 449.9 հազ.դրամ/ նորապսակ չորս զույգերին մատանիներ- 159.0 հազ.դրամ, հյուրասիրություն համայնքի անվանակոչության օրվա և տրնդեզի առթիվ - 250.0 հազ.դրամ, ամանորին մշակույթի տան հրապարակում տեղադրված տոնածառի համար լույսերի և հրավառ նյութերի ձեռք բերում- 40.9 հազ.դրամ/
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված- 655.0 հազ.դրամ / մանկական խաղահրապարակի սարքերի /ուղղահայաց ճոճանակ, սահարան, կարուսել և նստարան/ ձեռք բերում և երկու կանգառ-տաղավարների տեղադրում- ընդամենը 600.0 հազ. դրամ և շատրվանի ջրի պոմպի ձեռք բերում- 55.0 հազ.դրամ/:

3.Հասարակական կազմակերպությունների աջակցություն

Նվիրատվություններ շահ չհետապնդող կազմակերպություններին՝ 4819 հոդված- 50.0 հազ.դրամ / Արարատ- 2001 ՀԿ/:

4.Նախադպրոցական կրթություն

Դրամաշնորհ մանկապարտեզին՝ 4639 հոդված- 8846.0 հազ.դրամ,
Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված- 100.0 հազ.դրամ/ ձեռք է բերվել սառցարան/:

5.Ջրային կառույցների շահագործում և պահպանում

Աշխատողների աշխատավարձեր՝ 4111 հոդված- 1182.290 հազ.դրամ,
Կոմունալ ծառայություններ՝ 4213 հոդված- 1343.901 հազ. դրամ/ ջրամատակարարման վճար/:

6.Սոցիալական պաշտպանություն անապահով ընտանիքներին

Հուղարկավորության նպաստներ բյուջեից՝ 4726 հոդված- 400.0 հազ.դրամ

Այլ նպաստներ բյուջեից/ ֆինանսական օգնություն անապահով ընտանիքներին/
4729 հոդված- 1870.0 հազ.դրամ:

7.Ասֆալտ- բետոնյա ծածկի վերանորոգում

Տրանսպորտային նյութեր՝ 4264 հոդված - 348.197 հազ.դրամ /բնական գազի ձեռք բերում համայնքային ճանապարհների հարթեցման, ավազի տեղափոխման և լցման համար/:

8.Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում

Էներգետիկ ծառայություններ՝ 4212 հոդված- 875.806 հազ.դրամ,

Ընդհանուր բնույթի ծառայություն՝ 4239 հոդված- 220.0 հազ.դրամ/ էլեկտրիկի ծառայության վճար/,

Մարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4252 հոդված-295.6 հազ.դրամ/ լուսատու սարքավորումների ձեռք բերում և փոխարինում/:

9.Ընդհանուր բնույթի ծառայություն

Ընդհանուր բնույթի ծառայություն՝ 4239 հոդված- 527.603 հազ.դրամ/հրշեջ ծառայության սպասարկման վճար- 15.0 հազ.դրամ, դեպի խորքային հոր տանող բարձրավոլտ սյուների տեղափոխման և տեղադրման գումար- 120.0 հազ.դրամ, վարձակալության տրամադրվող հողերի չափազրակյան ծառայությունների գումար-199.930 / 28 գործ /, դպրոցի շրջանավարտներին<< Մարդարապատ>> տեղափոխող տրանսպորտի գումար- 40.0 դրամ, մանկապարտեզի շենքի դեռատիզացիոն/ պարտադիր կանխարգելիչ/ ծառայության վճար- 40.0 հազ. դրամ և թղթապանակ կազմերի ձեռք բերում /կադաստրի մարմնում սեփականության վկայականների ձեռք բերման համար- 3.9 հազ.դրամ, հակակարկտային կայանների լիցքավորում- 94.998 հազ.դրամ/:

10.Կանաչ տարածքների հիմնում և պահպանում

Հատուկ նպատակային նյութեր՝ 4269 հոդված- 12.824 հազ.դրամ/ կանաչապատ տարածքի համար թունաքիմիկատների ձեռք բերում/,

Աճեցվող ակտիվներ՝ 5131 հոդված- 300.0 հազ.դրամ/ համայնքապետարանի և մշակույթի տան տների հարակից տարածքների համար դեկորատիվ ծառերի և թփերի ձեռք բերում/:

11.Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում

Ընդհանուր բնույթի ծառայություն՝ 4239 հոդված- 55.0 հազ.դրամ/ գյուղաբնակ կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման երաժշտական ձևավորման ապահովման վճար/,

Հատուկ նպատակային նյութեր՝ 4269 հոդված- 589.5 հազ.դրամ/ գյուղաբնակ կանանց միջազգային օրվան նվիրված նվերների ձեռք բերում թվով 270 կանանց- 499.5 հազ.դրամ և ամանորին 2-10 տարեկան թվով 150 երեխայի համար ամանորյա տոպրակների ձեռք բերում- 90.0 հազ.դրամ/:

12.Սպորտի գոտու հիմնում և պահպանում

Մարզադաշտի կառուցում՝ 5112 հոդված- 8840.0 հազ. դրամ,

Նախագծա-նախահաշվային աշխատանքներ՝ 443.0 հազ.դրամ:

13.Ջրային տնտեսության ենթակառուցների կապիտալ հիմնանորոգում
Համայնքին պատկանող խորքային հորի պոմպի կապիտալ նորոգում` 4251 հոդված - 420.0 հազ. դրամ:

14. Բարձրագույն կրթություն

Կրթական նպաստներ բյուջեից` 4729 հոդված- 29.2 հազ.դրամ / տրամադրվել է համայնքի ուսանողին ուսումնական հաստատությունում ամենամյա վճարի մասամբ կատարման համար/:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև 2019 թ-ի բյուջեն, նշելով, որ 2019 թ-ի բյուջեի եկամտային մասը կազմում է 54543,5 հազար դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը, որը ուղղվում է ֆոնդային բյուջե` 8752,598 հազար դրամ, ծախսային մասը` 63296,098 հազար դրամ: Ներկայացվեց 2019 թ-ի ֆոնդային բյուջեի ֆոնդային մասը`

1. Կառավարման ապարատ /Նախատեսվում է գրասենյակային պահարան և համակարգչային սարքավորումներ գնելու համար/
Վարչական սարքավորումներ` 5122 հոդված –200.0 հազ. դրամ,
Ընդամենը` 200.0 հազ. դրամ:
2. Ճանապարհային տրանսպորտ /Նախատեսվում է Արարատյան-Ֆիդայու փողոցները կապող դեպի բուժարան տանող ճանապարհի ասֆալտապատում/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում` 5113 հոդված- 4147.598 հազ.դրամ,
Նախագծա-հետազոտական ծախսեր` 5134 հոդված- 200.0 հազ.դրամ,
Ընդամենը` 4347.598 հազ. դրամ:
3. Հանգիստ, մշակույթ, կրոն /Նախատեսվում է մշակույթի տանը կառուցված արարողությունների դահլիճի կահավորման և դահլիճի մանրահատակի ձեռքբերման համար/
Վարչական սարքավորումներ` 5122 հոդված -600.0 հազ.դրամ,
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում` 5113 հոդված - 400.0 հազ.դրամ,
Ընդամենը` 1000.0 հազ. դրամ:
4. Նախադպրոցական կրթություն /Նախատեսվում է մանկապարտեզի ճաշարանի համար սեղան և աթոռներ գնելու համար/
Վարչական սարքավորումներ` 5122 հոդված –200,0 հազ. դրամ,
Ընդամենը` 200,0 հազ. դրամ:
5. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում /Նախատեսվում է մանկապարտեզի համար թվով 9 պատուհան և 1 դուռ գնելու համար/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում- 460.0 հազ.դրամ,
Նախագծա-հետազոտական ծախսեր` 5134 հոդված- 20.0 հազ.դրամ,
Ընդամենը` 480,0 հազ. դրամ:

6. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում /Նախատեսվում է մշակույթի տան հարակից տարածքում կառուցված հանգստի գոտու և մարզադաշտի կանաչապատման աշխատանքներ/
Աճեցվող ակտիվներ` 5131 հոդված – 25.0 հազ.դրամ,
Ընդամենը` 25.0 հազ. դրամ:

7. Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում /Նախատեսվում է վերանորոգված խորքային հորի միացման հաղորդալար գնելու համար/
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում` 5113 հոդվածը - 800.0 հազ.դրամ,
Ընդամենը` 800.0 հազ. դրամ:

8. Բնական գազ և նավթամթերք /Նախատեսվում է Սևակի և Շիրվանզադե փողոցների մասնակի գազիֆիկացման համար/
Շենքերի և շինությունների կառուցում` 5112 հոդված- 1600.0 հազ.դրամ,
Նախագծա-հետազոտական ծախսեր` 5134 հոդված- 100.0 հազ.դրամ,
Ընդամենը` 1700.0 հազ. դրամ:

 Восстановимая подпись

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Подписано: GHАЗARYAN HOVSEP 3114590276

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ